

ԽՈՍՈՒՄ Ե ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՑԱԽՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ
ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՅՉ

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամ

Երևան
2022

«Խոսում է հանրությունը. Արցախյան կոնֆլիկտի ներկան ու ապագան հեռախոսային հարցման արդյունքներով» հետազոտությունն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից, Սիվիլիթաս հիմնադրամի ֆինանսավորմամբ: Այս զեկույցը ստեղծվել է առաջնային տվյալների հավաքագրմամբ իրականացված հետազոտության արդյունքում: Զեկույցի բովանդակությունը միմիայն հեղինակների պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի «Սիվիլիթաս» հիմնադրամի տեսակետները:

Զեկույցի կամ դրա առանձին մասերի վերահրատարակումը կամ վերարտադրությունը էլեկտրոնային կամ տպագիր տարբերակներով պետք է իրականացվի պատշաճ մեջբերումներով:

Մեջբերման օրինակ.

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ. (2022): *Խոսում է հանրությունը. Արցախյան կոնֆլիկտի ներկան ու ապագան հեռախոսային հարցման արդյունքներով*: Երևան: Սիվիլիթաս հիմնադրամ:

© Բոլոր իրավունքները պաշտպանված են: ՀՌԿԿ-Հայաստան: 2022

Կապ. crrc@crrc.am | crrc.am

Հեղինակներ

Լուի-Ալասան Կասենյարդ Վիոդ
Սրբուհի Միչիկյան
Սեդա Անանյան
Մարիամ Առաքելյան

Խմբագիրներ

Սոնա Բալասանյան
Լիլիթ Եզեկյան
Հայկ Սմբատյան

Հետազոտական խումբ

Անժելա Ղալամդարյան
Մարիամ Բաբայան
Արուսյակ Ոսկանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	4
2. Հեղափոխության նախագիծը	5
2.1 Հարցման սեթորը	5
2.2 Որակի մոլորակում	6
2.3 Սահմանափակումներ	7
3. Վերլուծություն	8
3.1 Արդյունքներ. Նկարագրական վիճակագրություն	8
3.2 Հսկայականության և ուղղակի վերաբերման վերաբերմունք	8
3.3 Հսկայականության դերակատարների նկատմամբ վերաբերմունք	15
3.4 Արդյունքների Տեսակետերը 44-Օրջա Պատերազմից Հետո	16
Եզրակացություն	19

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցն անդրադառնում է Արցախյան կոնֆլիկտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Արցախի բնակչության ներկայիս պատկերացումներին: Հետազոտության նպատակն է բացահայտել Արցախյան կոնֆլիկտի վերաբերյալ ընկալումները հետևյալ երեք հարցի շուրջ.

1. տեղական և միջազգային դերակատարների դերը Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործում,
2. հնարավոր զարգացումներն ու ապագայի տեսլականը,
3. Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության հարաբերությունները հակամարտության համատեքստում:

Հետազոտության շրջանակներում իրականացվել են հեռախոսային հարցազրույցներ Հայաստանում և Արցախում բնակվող 1502 հարցվողների շրջանում: Հարցումը ներկայացուցչական է, ինչը նշանակում է, որ տվյալները, որոշակի շեղման հավանականությամբ, կարող են տարածվել Արցախի և Հայաստանի ներկայիս բնակչության վրա:

Արդյունքները ցույց են տալիս, որ հայաստանցիների և արցախցիների կարծիքները հիմնականում նույնական են: Դրանք տարբերվում են միայն մի քանի հարցերի դեպքում. արցախցիներն առավել բարձր կամ դրական վերաբերմունք ունեն Ռուսաստանի նկատմամբ, քան հայաստանցիները: Արդյունքները նաև մատնանշում են, որ հարցվողների ճնշող մեծամասնությունը մերժում է ցանկացած սցենար, որը կենթադրի Արցախի գոյությունը Ադրբեյջանի կազմում: Ընդհանուր առմամբ՝ հարցվածներն Ադրբեյջանի վերաբերյալ ունեն բացասական վերաբերմունք:

Զեկույցի կառուցվածքն ունի հետևյալ տրամաբանությունը. սկզբում ներկայացված է ուսումնասիրության մեթոդաբանությունը, որն ընտրվել է հետազոտական հարցերին պատասխանելու նպատակով: Այն ներառում է մեթոդաբանական լուծումները, դաշտային աշխատանքների որակի ապահովումը, էթիկական նկատառումները և հետազոտական նախագծի ուժեղ կողմերի ու սահմանափակումների գնահատումը: Հաջորդիվ ներկայացնում ենք նկարագրական վիճակագրական տվյալներ, որոնք բաժանված են ըստ բնակչության վայրի՝ Հայաստան և Արցախ:

2. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Այս բաժնում ներկայացված են ուսումնասիրության մեթոդաբանական լուծումների ամփոփումն ու մանրամասները: Հաշվի առնելով, որ հարցումն իրականացվել է նշված հետազոտական հարցերին պատասխանելու նպատակով՝ այստեղ ներկայացված է այն ամբողջ տեղեկատվությունը, որն, ըստ Հանրային կարծիքի ուսումնասիրության ասոցիացիայի (AAPOR 2021), ենթակա է հանրայնացման¹:

2.1 ՀԱՐԳՍԱՆ ՄԵԹՈՂԸ

Հետազոտական հարցերին պատասխանելու համար ընտրվել է համակարգչի օգնությամբ հեռախոսային հարցազրույցների (CATI) մեթոդը՝ օգտագործելով Survey CTO ծրագրային փաթեթը: Դեմառդեմ հարցազրույցների փոխարեն այս մեթոդի նախընտրությունը հիմնված է այն հանգամանքի վրա, որ հարցվողների մի մասի բնակության վայր հասնելը եղել է դժվար (և/կամ վտանգավոր): Հարցված բնակչությունը Հայաստանում և Արցախում բնակվող չափահաս մարդիկ են: Նախատեսված ընտրանքի չափը 1500 հարցվող է եղել (1100՝ Հայաստանից, 400՝ Արցախից), սակայն Արցախի բնակիչների շրջանում հետազոտությունն իրականացվել է նախատեսվածից աննշան շեղմամբ՝ 402 հարցվող: Հայաստանի հարցվողների դեպքում ստացվել է ընտրանքի ակնկալվող արդյունքը:

Հարցաթերթը մշակել է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի հետազոտական թիմը՝ «Սիվիլիթաս» հիմնադրամի հետ համագործակցությամբ: Այն կառուցվել է հետազոտական հարցերի տրամաբանությունից ելնելով: Հարցաթերթի փորձարկումն իրականացվել է 2022 թվականի նոյեմբերի 5-ից 6-ն ընկած ժամանակահատվածում: Փորձարկումից հետո որոշակի փոփոխություններ են կատարվել՝ բարելավելու հարցադրումների հստակությունը և պատասխանների որակը:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2022 թվականի նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում: Հարցվողներն ընտրվել են պատահական թվանիշերի հավաքման տեխնիկայով (random digit dialing-RDD)՝ ապահովելու պատահական ընտրանքը: Այն թույլ է տվել պատահականորեն գեներացնել Հայաստանում և Արցախում գործող բջջային օպերատորների կոդերով սկսվող հեռախոսահամարներ և զանգերի միջոցով ընտրել պատահական հարցվողների՝ չունենալով ընտրանքի հիմք: Ելնելով այն հանգամանքից, որ բնակչության ժողովրդագրական պատկերից շեղման հավանականությունը փոքր է, վերլուծության համար հետշերտավորման կշռում (post-stratification weights) չի կատարվել: Աղյուսակ 1-ում ներկայացված են հետազոտությանն առնչվող ժողովրդագրական տեղեկությունները:

¹ AAPOR, “Transparency Initiative Disclosure Elements,” April 2021, https://www.aapor.org/AAPOR_Main/media/TI-Updates-10-8.21/TI-Attachment-C.pdf.

Աղյուսակ 1. Ժողովրդագրական վիճակագրություն

	Ակնկալվող ² (Հայաստան)	Իրականացված (Հայաստան)	Իրականացված (Արցախ)	Իրականացված (Ընդամենը)
Սեռ				
Իգական	52.8%	48%	54.7%	49.8%
Արական	47.2%	52%	45.3%	50.2%
Տարիք				
18-35	34%	31.9%	34.1%	32.5%
36-55	33.5%	37.5%	41.8%	38.7%
56+	32.4%	30.5%	24.1%	28.8%
Բնակավայրի տիպ				
Քաղաքային	64%	68.6%	85.8%	73.2%
Գյուղական	36%	31,1%	14.2%	26.8%

2.2 ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Տվյալների որակն ապահովելու նպատակով կիրառվել են մի քանի տեխնիկաներ. ամենօրյա ռեժիմով ստուգվել է տվյալների շտեմարանը (database), ստուգվել է յուրաքանչյուր հարցազրուցավարի կողմից իրականացված հարցազրույցների 20 տոկոսը, հարցազրույցների ձայնագրություններն օգտագործվել են հարցազրուցավարների անկողմնակալությունը ստուգելու նպատակով՝ ապահովելու ուղղորդող հարցերի, բաց թողնված հարցերի և/կամ պատասխանների չեզոքացումը կամ շտկումը: Այդ նպատակով կատարվել են նաև հետադարձ զանգեր: Հարցազրուցավարի աշխատանքի որակի ստուգումն իրականացվել է հաշվի առնելով հետևյալ չափանիշները.

- հարցազրույցի միջին տևողությունը և սկզբի ու ավարտի ժամը,
- «Դժվարանում եմ պատասխանել» (ԴՊ) և «Հրաժարվում եմ պատասխանել» (ՀՊ) պատասխանների թիվը և համամասնությունն ընդհանուր պատասխանների մեջ,
- «Այլ» պատասխանի տարբերակում և բաց հարցերում լրացված տեղեկատվության հաճախականությունը և բովանդակության որակը,
- նորմալ բաշխումից դուրս պատասխանները (outliers),
- անցումների տրամաբանությունը,
- յուրաքանչյուր օրվա ընթացքում իրականացված հարցազրույցների թիվը:

² Ակնկալվող ցուցանիշները՝ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022 թ. դրությամբ:

2.3 ՍԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐ

Հետազոտության շրջանակներում հավաքագրված տվյալներն արժանահավատության (validity) առնչվող որոշակի սահմանափակումներ ունեն: Այնուամենայնիվ, այդ խնդիրները, մի կողմից, աննշան են և չեն կարող էականորեն ազդել հետազոտության արդյունքների վրա, մյուս կողմից՝ ուսումնասիրության շրջանակներում այդ խնդիրները դժվար լուծելի են եղել:

Այսպես, ընտրված մեթոդի կիրառման արդյունքում ընտրանքից դուրս են մնացել այն հարցվողները, որոնք չունեն բջջային հեռախոսահամար: Սրա արդյունքում, հնարավոր է՝ սահմանափակվել է բնակչության որոշ խմբերի մասնակցությունը (տարեցներ, գյուղական բնակավայրերում ապրող մարդիկ, ազատագրվածներ և այլն) հարցմանը: Բացի դրանից, Արցախի բնակչության մասին ժողովրդագրական տվյալները հասանելի չեն: Հետևապես՝ արցախցի հարցվողների դեպքում բացակայում է ընտրանքի որևէ հիմք (sampling frame), հետևաբար նաև, չի իրականացվել հետշերտավորման կշռում (post-stratification weights): Սա էլ, իր հերթին, դժվարություն է ստեղծել սխալի միջակայքը (margin of error) հաշվարկելու հարցում:

Չենք կարող հստակեցնել նաև հարցվողների ծագումը (ՀՀ-ից են, Արցախից, թե մեկ այլ վայրից)․ գրանցվել է հարցվողի բնակվելու վայրը միայն վերջին վեց ամսվա ընթացքում: Պետք է հաշվի առնել, սակայն, որ հարցվողի ծագումը կարող է պայմանավորել նրա պատասխանները: Այնուամենայնիվ, քանի որ հարցումն իրականացվել է հայերենով, հավանականությունը, որ նրանց մեծ մասը կարող է չլինել Արցախից կամ Հայաստանից, բավականին ցածր է: Սակայն, հնարավոր է, որ ծագումով արցախցիները ընդգրկված լինեն հայաստանաբնակների ընտրանքում: Այդուհանդերձ, հետազոտության արժանահավատությունը շարունակում է մնալ բավականին բարձր:

Փորձառու անձնակազմի, հիմնավոր մեթոդաբանության և որակի վերահսկման շարունակական աշխատանքների շնորհիվ հետազոտության հուսալիության հետ կապված խնդիրներ հետազոտական թիմը չի արձանագրել:

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հավաքագրված տվյալների վերլուծությունն ամբողջությամբ իրականացվել է Rstudio ծրագրի միջոցով³:

3.1 ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս բաժինը համառոտ նկարագրում է հետազոտության արդյունքները: Արդյունքները բաժանված են երեք մասի՝ ամփոփելով տեսակետները հետևյալ ենթաթեմաների վերաբերյալ.

- հակամարտության կարգավորում,
- հակամարտությանն առնչվող դերակատարների և հակամարտության հարցում նրանց ունեցած դերի վերաբերյալ տեսակետներ,
- Արցախի բնակիչների տեսակետները 44-օրյա պատերազմից հետո (այս բաժնի հարցերին պատասխանել են միայն Արցախում բնակվող հարցվողները):

Հետազոտության սխալի միջակայքը Հայաստանի բնակչության համար $\pm 2,95$ է՝ վստահության 95% մակարդակով: Արցախի բնակչության համար սխալի միջակայքը $\pm 4,88$ է՝ 95% վստահությամբ:


3.2 ՀԱՎԱՍՏԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ

Հայաստանի և Արցախի բնակիչները պատասխանել են «*Ինչի՞ց պետք է սկսել Արցախյան հակամարտության կարգավորումը*» հարցին: Արդյունքները գրեթե նույնն են Հայաստանի և Արցախի պարագայում՝ բացառությամբ մի քանի հատկանշական տարբերությունների (տե՛ս **Գծապատկեր 1**): Մինչ արցախցիները նշել են *անվտանգային երաշխիքները*⁴ որպես կարգավորման անհրաժեշտ սկիզբ, հայաստանցիները կողմնակից են *գերիների վերադարձին*⁴՝ որպես գլխավոր խնդրի լուծում: Բացի դրանից, Արցախի կարգավիճակի հստակեցումն ավելի կարևոր են համարել արցախցիները, քան հայաստանցիները, թեև Հայաստանում և Արցախում միասին մեր հարցվածների ավելի քան 20%-ը որպես կարգավորման սկիզբ է նշել հենց այս կետը: Ներկայիս շրջափակումը և տնտեսական խնդիրները երկու դեպքում էլ համեմատաբար ցածր ցուցանիշներ են գրանցել: Նշենք, որ այս տվյալները հավաքագրվել են Լաչինի միջանցքի վերջին շրջափակումից (2022 թվականի դեկտեմբերի 13) և դեպի Արցախ գազամատակարարման դադարեցումից (2022 թվականի դեկտեմբերի 14) առաջ (Սիվիլնեթ 2022):

³ R Core Team, “R: A Language and Environment for Statistical Computing” (Vienna, Austria, 2022), <https://www.R-project.org/>.


⁴ Գերի ասելով նկատի ունենք և՛ քաղաքացիական, և՛ զինվորական բանտարկյալներին: Խոսքը կոնկրետ ռազմագերիների մասին չէ (*POW*):

Գծապատկեր 1. Ձեր կարծիքով՝ ինչի՞ց պետք է սկսել Արցախյան հիմնախնդրի կարգավորումը:



«Ի՞նչ ստատուս պետք է ունենա Արցախը, որպեսզի Արցախյան հիմնախնդիրը վերջնականապես կարգավորվի» հարցին երկու հասարակությունների հարցվողներն էլ հիմնականում նշել են «Արցախը պետք է լինի անկախ պետություն» տարբերակը, երկրորդ և երրորդ ամենահաճախ ընտրված պատասխաններն են՝ «Արցախը պետք է լինի Հայաստանի մաս» և «Արցախը պետք է լինի Ռուսաստանի կազմում՝ հատուկ կարգավիճակով»: Պետք է նշել, որ հայաստանցի հարցվողների պարագայում երկրորդ և երրորդ ամենաշատ ընտրված պատասխանների միջև տարբերությունը նշանակալի է, մինչդեռ արցախցիների դեպքում վերոհիշյալ պատասխանների միջև տարբերությունը ընկնում է սխալի միջակայքում, ուստի այս պատասխանների միջև ոչ մի դասակարգում չի կարելի անել: Եվ վերջապես, Արցախում ոչ մի հարցվող չի նախընտրել առանց ինքնավարության Ադրբեջանի կազմում լինելու տարբերակը, իսկ Հայաստանում նման կարծիք հայտնել է միայն մեկ հոգի:

Գծապատկեր 2. Ըստ Ձեզ՝ Արցախը ի՞նչ ստատուս պիտի ունենա, որպեսզի Արցախյան հիմնախնդիրը վերջնականապես կարգավորվի:




Հարցին, թե «Ո՞ր երկրների հասարակությունների կամքի արտահայտումից է կախված Արցախյան հակամարտության կարգավորումը», հարցվողները ամենից շատ նշել են «Արցախի և Հայաստանի հասարակությունների կամքի արտահայտումից» տարբերակները: Սրան զուգահեռ՝ ըստ բոլոր հարցվողների, հակամարտության լուծումը կախված չէ Ադրբեջանի հասարակության կամքի արտահայտումից: Արցախի հարցվածներն ավելի թերահավատորեն են վերաբերվում Արցախյան հակամարտության կարգավորման մեջ Ադրբեջանի հասարակության դերակատարությանը:


Գծապատկեր 3. Խնդրում են 1-10 բալանի սանդղակով գնահատել, թե Արցախյան հակամարտության կարգավորումը որքանով է կախված...

Հայաստանյան հասարակությունից


■ ՀՀ բնակիչներ (N=1100)
■ Արցախի բնակիչներ (N=402)



Արցախյան հասարակությունից




Ադրբեջանական հասարակությունից



Հարցին, թե «Ո՞ր երկրներից է կախված Արցախյան հակամարտության կարգավորումը», հարցվածներն ամենից շատ նշել են «Հայաստան» և «Ռուսաստան» տարբերակները (Գծապատկեր 4): Արցախցի հարցվողներն ավելի շատ են նշել «Ռուսաստան» տարբերակը, քան Հայաստանաբնակները: Հատկանշական տարբերություններ են գրանցվել «ԱՄՆ-ին»


(ավելի բարձր՝ Հայաստանում) և «Արցախի Հանրապետությանը» (ավելի բարձր՝ Արցախում) տարբերակներին տրված միավորներում:

Գծապատկեր 4. Ձեր կարծիքով՝ թվարկված ո՞ր երկրներից է կախված Արցախյան հիմնախնդրի կարգավորումը: (n=3004, 1502 հարցվողներից յուրաքանչյուրը կարող է ընտրել մինչև 3 տարբերակ)




Անդրադառնանք այն քայլերին, որոնք Հայաստանը, ըստ հարցման արդյունքների, պետք է իրականացնի Արցախյան հակամարտության կարգավորման ուղղությամբ: Ամենահաճախ հանդիպած պատասխաններն են՝ «*Բանակի սպառազինության ավելացումը*» և «*Հայաստանը պետք է հույսը դնի ինքն իր վրա*»: Հայաստանցիների և արցախցիների միջև միակ ընդգծված տարբերությունը վերաբերում էր «*Ռուսաստանի հետ կապերի ամրապնդման*» տարբերակին. տարբերակ, որն ընտրել է արցախցի հարցվածների 30,3%-ը, իսկ հայաստանցիների՝ միայն 11,4%-ը:

Գծապատկեր 5. Ձեր կարծիքով՝ ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկի Հայաստանը Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործում: (n=2497, 1502 հարցվողներից յուրաքանչյուրը կարող է ընտրել մինչև 2 տարբերակ)




Ինչ վերաբերում է միջազգային կազմակերպություններին, արդյունքները համեմատաբար համաչափ են և շատ դեպքերում սխալի միջակայքի սահմաններում են, ինչը դժվարացնում է մեկնաբանություն կատարելը:

Գծապատկեր 6. Ձեր կարծիքով՝ թվարկված ո՞ր կառույցներից է կախված Արցախյան հիմնախնդրի կարգավորումը: (n=1785, 1502 հարցվողներից յուրաքանչյուրը կարող է ընտրել մինչև 2 տարբերակ)




Հարցվածների մեծ մասը հակամարտությունը չի դիտարկում որպես «երկկողմանի խնդիր Ռուսաստանի և Ադրբեջանի միջև», իսկ ավելի մեծ մասը համարում է, որ «հակամարտությունը դեռևս գոյություն ունի» (Գծապատկեր 7): Այստեղ Հայաստանի և Արցախի հարցվածների պատասխաններում էական տարբերություններ չկան:

Գծապատկեր 7. 44-օրյա պատերազմից հետո Արցախյան հակամարտությունը...



...այլևս գոյություն չունի:



3.3 ՀԱԿԱՍՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԵՐՎԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ


Այս բաժնում ներկայացված է ՀՀ և Արցախի բնակչության վերաբերմունքը հակամարտության (հնարավոր) դերակատարների նկատմամբ: Հատկանշական արդյունքներից մեկն այն է, որ արցախաբնակներն ավելի դրական վերաբերմունք ունեն Ռուսաստանի նկատմամբ, քան հայաստանաբնակները:

Ըստ **Գծապատկեր 8**-ի՝ արցախցիների 72%-ը նշել է, որ Ռուսաստանի Դաշնության մասնակցությունը Արցախյան հակամարտության կարգավորման հարցում լիովին դրական կամ ավելի շուտ դրական է անդրադառնում Արցախի շահերի վրա: Ինչ վերաբերում է հայաստանցիներին՝ նրանց 38.2%-ն է համարում, որ Ռուսաստանի Դաշնության մասնակցությունը Արցախյան հակամարտության կարգավորման հարցում կարող է լիովին կամ ավելի շուտ դրական անդրադառնալ Արցախի շահերի վրա:


Նույն օրինաչափությունն է նկատվում նաև Հայաստանի շահերի վրա Ռուսաստանի միջամտության ազդեցության հարցում: Արցախաբնակների 56,7%-ը կարծում է, որ Ռուսաստանի Դաշնության մասնակցությունն Արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցում Հայաստանի շահերի վրա ունի լիովին կամ ավելի շուտ դրական ազդեցություն: Այս ցուցանիշը նվազում է 24,5%-ով, երբ հայաստանաբնակներն են պատասխանում, թե *ինչպես է ՌԴ մասնակցությունը Արցախյան հակամարտության կարգավորման հարցում անդրադառնում Հայաստանի շահերի վրա*:

Գծապատկեր 8. Ըստ Ձեզ՝ ՌԴ-ի մասնակցությունը Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործում ինչպես է անդրադառնում Հայաստանի/Արցախի շահերի վրա...

Հայաստանի շահերի վրա




Արցախի շահերի վրա



«Ո՞ր ուժերը կարող են լավագույնս ապահովել Արցախի ներկայիս սահմանների և բնակչության անվտանգությունը» հարցի պարագայում, **Գծապատկեր 9**-ը ցույց է տալիս, որ հայաստանցիները նշված չորս տարբերակներից որևէ մեկին նշանակալի նախընտրություն չեն տվել: Մյուս կողմից, արցախցիներն առավել նախընտրելի են համարել *ռուս խաղաղապահների և Արցախի պաշտպանության բանակի կողմից անվտանգության ապահովումը*:

Գծապատկեր 9. Ձեր կարծիքով՝ ո՞ր ուժերը կարող են լավագույնս ապահովել Արցախի ներկայիս սահմանների և բնակչության անվտանգությունը: (n=2346, 1502 հարցվողներից յուրաքանչյուրը կարող է ընտրել մինչև 2 տարբերակ)




3.4 ԱՐՑԱՒԱՅԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏԵՐԸ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԳՄԻՑ ՀԵՏՈ

Հարկ է նկատի ունենալ, որ հաջորդ բոլոր հարցերը տրվել են միայն արցախաբնակներին:


Հարցին, թե *Հայաստանում, Ադրբեջանում և Արցախում մարդիկ որքանով են պատրաստ խաղաղ համակեցությանը*, հարցվածների ճնշող մեծամասնությունը նշել է, որ երեք հասարակություններից ոչ մեկն ընդհանրապես պատրաստ չէ (**Գծապատկեր 10**): Ամենաուշագրավ արդյունքը, հավանաբար, այն հարցվածների թիվն է, որոնք հրաժարվել կամ դժվարացել են պատասխանել Ադրբեջանի հասարակության վերաբերյալ հարցին: Արցախում հարցվածների 27,4%-ը տեղավորվում է այս կատեգորիայի մեջ:

Գծապատկեր 10. Վերջին շրջանում քաղաքական գործիչները պարբերաբար խոսում են «Հայաստանի, Արցախի, Ադրբեջանի հասարակություններին խաղաղության նախապատրաստելու» մասին: Ձեր կարծիքով՝ որքանո՞վ են պատրաստ խաղաղ համակեցության... (n=402, յուրաքանչյուր հարցի համար)




Հետաքրքիր է այն փաստը, որ արցախաբնակների վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ հիմնականում նույնն է մնացել 44-օրյա պատերազմից հետո (47.5%, **Գծապատկեր 11**): Այնուամենայնիվ, երկրորդ ամենահաճախ ընտրված պատասխանը «Որոշ չափով վատացել է» տարբերակն է (19.2%): Մնացած երեք տարբերակների դեպքում պատասխանները գրեթե համաչափ են:

Գծապատկեր 11. Ձեր կարծիքով՝ 44-օրյա պատերազմից հետո արցախցիների վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ... (n=402)




Հարցին, թե *ինչպես են իրենք վերաբերվում Արցախի և Ադրբեջանի պաշտոնյաների փոխգործակցությանը* (**Գծապատկեր 12**), ամենաշատը տրվել է «Լիովին բացասական» պատասխանը (33.8%), իսկ ամենաքիչը՝ «Լիովին դրական» պատասխանը (3.7%): Հատկանշական է, որ չեզոք պատասխանների («ոչ դրական, ոչ բացասական») և ԴՊ/ՀՊ տարբերակների մասնաբաժինը համեմատաբար բարձր է (համապատասխանաբար՝ 26,1% և 14,2%):

Գծապատկեր 12. Ինչպե՞ս եք վերաբերվում Արցախի պաշտոնյաների շփումներին Ադրբեջանի պաշտոնյաների հետ: (n=402)



Վերջին հարցը վերաբերում է նրան, թե *արդյոք հարցվածները կշարունակեն ապրել Արցախում նշված հինգ սցենարների դեպքում* (Գծապատկեր 13), որոնցում, բացի մեկից, Արցախը ձևակերպվել է ամբողջությամբ կամ մասամբ Ադրբեջանի կազմում: Ըստ հավաքագրված տվյալների՝ այս սցենարները խիստ դժգոհություն են առաջացրել հարցվողների շրջանում: Միակ սցենարը, որի դեպքում հարցվածների ճնշող մեծամասնությունը պատրաստակամություն է հայտնել մնալու Արցախում, այն է, որ «Արցախը լինի Ռուսաստանի կազմում՝ հատուկ կարգավիճակով»: Այստեղ կարևոր է նշել, որ առաջարկվող սցենարներից և ոչ մեկը չի ներառել Հայաստանի մաս կամ անկախ պետություն լինելու տարբերակները:

Գծապատկեր 13. Վերջին շրջանում Արցախի ստատուսի հետ կապված մի շարք սցենարներ են քննարկվում: Կշարունակեի՞ք բնակվել Արցախում հետևյալ սցենարների դեպքում... (n=402, յուրաքանչյուր հարցի համար)



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՌԿԿ-Հայաստանը նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է տվյալների հավաքագրում՝ պարզելու Արցախյան հիմնախնդրի շուրջ հանրային ընկալումները ՀՀ-ում և Արցախում: Ուսումնասիրությունը հատկապես անդրադարձել է կոնֆլիկտի տեղական և միջազգային դերակատարների և կոնֆլիկտի ապագայի վերաբերյալ ընկալումներին:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանի ու Արցախի բնակիչները, ընդհանուր առմամբ, համակարծիք են հարցերի մեծամասնության շուրջ՝ տարբերվելով միայն մի քանի հարցում: Հատկանշական է, որ.

- հարցվողները Հայաստանում և Արցախում հիմնականում հավանություն են տվել Արցախի անկախ կազավիճակին: Երկրորդ և երրորդ ամենաընտրված տարբերակները Հայաստանի մաս և Ռուսաստանի կազմում հատուկ կարգավիճակով ընդգրկվել են:
- հարցին, թե Արցախյան հիմնախնդրի կարգավորումը որ երկրներից է կախված, ամենաշատը տրված պատասխանները եղել են՝ «Հայաստանից» և «Ռուսաստանից»:
- Արցախում հարցվողներն ավելի դրական վերաբերմունք են ցուցաբերել Ռուսաստանի նկատմամբ, քան Հայաստանում հարցվածները:
- հետազոտության արդյունքները ցույց են տալիս խիստ բացասական վերաբերմունք Արցախի՝ Ադրբեջանի կազմում որևէ կարգավիճակով լինելու հեռանկարին: Հարցվողներն, առհասարակ, բացասական վերաբերմունք են արտահայտել Ադրբեջանի նկատմամբ:
- ըստ Արցախում հարցվածների՝ ընդհանուր առմամբ, 44-օրյա պատերազմից հետո արցախցիների վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ չի փոխվել: